ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ
ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Սույն հրապարակման մեջ ներկայացված ցուցանիշները հաջորդ հիմնական հրապարակումներում կարող են ենթարկվել փոփոխության՝ տվյալների նախնական տեղեկատվական բազայի կառուցվածքային ու տրամաբանական ստուգաճշտման աշխատանքներով պայմանավորված:

ՀՀ 2011թ. մարդահամարի մեթոդաբանական հիմքն ամբողջապես խարսխված է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի կողմից Եվրոպական համայնքների վիճակագրական ծառայության (Եվրոստատ) համագործակցությամբ մշակված «2010թ. մարդահամարների և կացարանների հաշվառում անցկացնելու եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականների» վրա (ՄԱԿ, Նյու-Յորք և Ժնև, 2006թ, տես՝ http://www.unece.org/fileadmin/DAM/stats/publications/CES_2010_Census_Recommendations_English.pdf*):*

2011թ. հոկտեմբերի 12-21-ը Հայաստանի Հանրապետությունում անցկացվեց հերթական մարդահամարը

Հայաստանի Հանրապետության, ինչպես և յուրաքանչյուր երկրի համար, մարդահամարի անցկացումն ունի կարևոր սոցիալական և տնտեսական նշանակություն:

Մարդահամարների արդյունքներով բնակչության և նրանց կացարանների վերաբերյալ ստացված բազմաբնույթ տեղեկությունները հնարավորություն կտան ուսումնասիրել հանրապետության հասարակական և տնտեսական իրավիճակները, ինչպես նաև տվյալներն օգտագործել երկրի համար կարևոր որոշումներ ընդունելու և ծրագրեր մշակելու համար:

Սույնով երախտիքի խոսք է հղվում հանրապետության ողջ բնակչությանը, ով իր ակտիվ մասնակցությամբ և վերաբերմունքով նպաստեց ՀՀ 2011թ. մարդահամարի կայացմանը: Մեր երախտիքն ենք հայտնում նաև Համաշխարհային Բանկին, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամին, ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն Հանձնակատարի Հայաստանյան Գրասենյակին, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալությանը, ԱՄՆ-ի առևտրի դեպարտամենտի հաշվառումների բյուրոյին, Նորվեգիայի, Շվեյցարիայի, Հնդկաստանի և Իտալիայի կառավարություններին, որոնց աջակցությամբ իրականություն դարձավ Հայաստանի Հանրապետության 2011թ. երկրորդ ազգային մարդահամարի կազմակերպումն ու անցկացումը:

Մարդահամարի իրականացման բոլոր փուլերում անգնահատելի էր ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովի օժանդակությունը՝ ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար, պարոն Ա.Գևորգյանի նախագահությամբ:

ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման համապետական հանձնաժողովն իր երախտիքի խոսքն է հղում Հայ Առաքելական Եկեղեցուն, ՀՀ նախարարություններին և գերատեսչություններին, ՀՀ մարզպետներին և հանրապետության 915 համայնքների և Երևանի 12 վարչական շրջանների ղեկավարներին, «Արմենտել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» բջջային օպերատորներին, գիտակրթական և հասարակական կազմակերպությունների և դոնոր հանրության բոլոր այն անդամներին և աշխատակիցներին, ովքեր իրենց կողմից ցույց տված ցանկացած տեսակի օգնությամբ օժանդակեցին մարդահամարի իրականացմանը:

ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստման, անցկացման և տվյալների մշակման ընդամենը ծախսերը 2009-2012թթ. համար կազմել են 1 896 520.0 հազ. դրամ: Մարդահամարի իրականացման գործառույթներին **Հայաստանի Հանրապետությանը** ֆինանսական և տեխնիկական աջակցություն է ցուցաբերել նաև **միջազգային դոնոր հանրությունը:** Ընդհանուր ծախսերի գերակշիռ մասը՝ **69.2**%, տրամադրվել է ՀՀ Պետական բյուջեից, իսկ մնացածը դոնոր երկրների և կազմակերպությունների կողմից՝ ի դեմս Նորվեգիայի կառավարության (12.3%), Շվեյցարիայի Դաշնային կառավարության (9.8%), ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի (3.3%), Հնդկաստանի կառավարության (համակարգչային տեխնիկայի տեսքով, որը գնահատվել է 2.7%), Համաշխարհային Բանկի (2.0%), ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի (0.4%) և Իտալիայի կառավարության (0.3%):

ՀՀ 2011թ. մարդահամարի ծրագրի (հարցաշարի) նոր հարցերը

ՀՀ 2011թ. մարդահամարի ծրագրում (ՀՀ 2001թ. մարդահամարի համեմատ) ընդգրկվել են գյուղատնտեսությանը վերաբերող հարցեր, որոնց ընտրության հարցում ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) առաջնորդվել է ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի՝ 2010 թվականի ռաունդում մարդահամարի և կացարանների հաշվառման Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի հանձնարարականներով, ինչը հնարավորություն կընձեռի Հայաստանի Հանրապետությունում ձևավորել գյուղացիական տնտեսությունների վիճակագրական ռեգիստր՝ գյուղատնտեսական համատարած հաշվառման գլխավոր համակցության ձևավորման նպատակով:

Վերոհիշյալ հանձնարարականների հիման վրա ՀՀ 2011թ. մարդահամարի հարցաշարում ավելացվել են նաև հարցեր, որոնք վերաբերել են.

- հավատքին,
- վերջին 12 ամիսների ընթացքում արտերկրից դրամական միջոցներ ստանալու փաստերին,
- արձանագրված կենդանի ծնունդների և մահվան դեպքերի վերաբերյալ քաղաքացիական կացության գրանցումներին,
- օրենքով սահմանված կարգով հաշմանդամի կարգավիճակ ունեցող անձանց առկայությանը:

Մարդահամարի կադրերը

ՀՀ 2011թ. մարդահամարի աշխատանքների նախապատրաստման, անցկացման և հավաքագրված տեղեկությունների վիճակագրական մշակման, կազմակերպման և իրականացման համար ժամանակավորապես (տարբեր ժամկետներով) ներգրավվել է **15 869** անձ, որից միայն դաշտային աշխատանքների (հաշվառման) իրականացման համար ստեղծված **182** մարդահամարի, **2 243** հրահանգչական և **11 548** հաշվային տեղամասերում աշխատանքներն իրականացրել են **14 974-ը** (ներառյալ պահուստային աշխատողներն ու ՀՀ ԱՎԾ մարզային և Երևան քաղաքի գործակալություններում մարդահամարի աշխատանքները համակարգողները), որոնց բաշխումն ըստ տարիքի, կրթական մակարդակի և զբաղմունքի ներկայացված է ստորև.

Դաշտային աշխատանքներն իրականացրած աշխատողների 67 %-ը կազմել են կանայք, 33 %-ը՝ մինչև 30 տարեկանները, 55 %-ը՝ 30-55 տարեկանները և 12 %-ը՝ 55 և բարձր տարիքի անձինք: Նրանց 46 %-ը ունեցել են բարձրագույն, 21 %-ը՝ միջնակարգ կրթություն:

ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԿԱԴՐԵՐ

Դաշտային աշխատանքներում ներգրավված կադրերն ըստ սեռի, տարիքի, կրթական մակարդակի, զբաղվածության և փորձառության

(մարդ)

	Մարդահամարի աշխատանքները համակարգողներ	Մարդահամարի տեղամասի վարիչներ և նրանց օգնականներ	Հրահանգիչ-հսկիչներ	Հաշվարարներ
ԸՆԴԱՄԵՆԸ	61	364	2425	12124
նրանցից՝ կանայք	23	173	1458	8362
Ըստ տարիքի				
մինչև 30 տարեկան	18	97	675	4130
30-55 տարեկան	35	200	1401	6589
55 և բարձր	8	67	349	1405
Ըստ կրթական մակարդակի				
բարձրագույն	53	276	1542	4971
միջին մասնագիտական	7	82	665	4234
միջնակարգ	1	6	218	2919
Ըստ հիմնական զբաղմունքի				
ուսուցիչներ	6	59	395	1816
այլ	19	106	605	2418
Ուսանողներ	1	11	90	823
Չաշխատողներ	35	188	1335	7067
նրանցից՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում գրանցվածներ	-	-	51	336
Ըստ մասնակցության				
մարդահամարներին և այլ հետազոտություններին	42	174	624	1940
ընտրությունների կազմակերպման և անցկացման աշխատանքներին	24	143	650	1879

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պաշտոնական անվանումը՝ **Հայաստանի Հանրապետություն**
Մայրաքաղաքը՝ **Երևան**
Պետական լեզուն՝ **հայերեն**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման հիմքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքներն են, որոնց համաձայն ՀՀ տարածքը բաժանված է 10 մարզերի՝ 48 քաղաքային ու 866 գյուղական համայնքներով և Երևանի քաղաքային համայնքի (12 վարչական շրջաններով):

ՀՀ վարչատարածքային քարտեզ



ՀՀ վարչատարածքային բաժանումը

Մարզեր և ք. Երևան	Քաղաքային համայնքներ	Վարչական շրջաններ	Գյուղական համայնքներ	Գյուղական բնակավայրեր
Ք. Երևան	1	12	-	-
Արագածոտն	3	-	111	117
Արարատ	4	-	93	95
Արմավիր	3	-	94	95
Գեղարքունիք	5	-	87	93
Լոռի	8	-	105	122
Կոտայք	7	-	60	62
Շիրակ	3	-	116	128
Սյունիք	7	-	102	127
Վայոց ձոր	3	-	41	52
Տավուշ	5	-	57	62
Ընդամենը ՀՀ	**49**	**12**	**866**	**953**

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԸՍՏ ՄԱՐԴԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(մարդ)

ՀԱՇՎԵԳՐՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ		ԱՌԿԱ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ		ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ	
2001թ.[1]	2011թ.[2]	2001թ.[1]	2011թ.[2]	2001թ.[1]	2011թ.[2]
3 458 303	3 298 084	3 002 594	2 871 771	3 213 011	3 018 854

(մարդ)

	Առկա բնակչություն		Մշտական բնակչություն	
	2001թ.	2011թ.	2001թ.	2011թ.
Ընդամենը ՀՀ	**3 002 594**	**2 871 771**	**3 213 011**	**3 018 854**
Ք. Երևան	1 091 235	1 054 698	1 103 488	1 060 138
Արագածոտն	126 278	125 539	138 301	132 925
Արարատ	252 665	246 880	272 016	260 367
Արմավիր	255 861	256 639	276 233	265 770
Գեղարքունիք	215 371	211 828	237 650	235 075
Լոռի	253 351	217 103	286 408	235 537
Կոտայք	241 337	245 324	272 469	254 397
Շիրակ	257 242	233 308	283 389	251 941
Սյունիք	134 061	119 873	152 684	141 771
Վայոց ձոր	53 230	47 659	55 997	52 324
Տավուշ	121 963	112 920	134 376	128 609

Ցուցանիշների սահմանումները

1. **Հաշվեգրված բնակչության թվաքանակի ցուցանիշը՝** բոլոր այն անձանց թվաքանակի հանրագումարն է, որոնց մասին հաշվարարները հարցաթերթերում լրացրել են տեղեկություններ՝ անկախ **լրացման պահին** նրանց ներկա կամ բացակա լինելու հանգամանքից (այդ թվում՝ բացակայության տևողությունից):

2. **Առկա բնակչության թվաքանակի ցուցանիշը** տվյալ տարածքում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և **ժամանակավոր ներկա** բնակչության թվաքանակի ցուցանիշների հանրագումարն է:

Ժամանակավոր ներկա *է համարվում մարդահամարի պահին տվյալ տարածքում ոչ ավել քան մեկ տարի ժամկետով գտնվող և մշտապես չբնակվող անձը:*

3. **Մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը** տվյալ տարածքում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա և **ժամանակավոր բացակայող** բնակչության թվաքանակի ցուցանիշների հանրագումարն է:

Ժամանակավոր բացակա *է համարվում՝ մարդահամարի պահին իր հիմնական (մշտական) բնակության վայրից մինչև մեկ տարի ժամկետով բացակա անձը:*

[1] Հաշվառման պահի՝ 2001թ. հոկտեմբերի 9-ի լույս 10-ի (հետայսու՝ հոկտեմբերի 10-ի) դրությամբ:
[2] Հաշվառման պահի՝ 2011թ. հոկտեմբերի 11-ի լույս 12-ի (հետայսու՝ հոկտեմբերի 12-ի) դրությամբ:

ՀՀ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿ

Ըստ ՀՀ 2011 թվականի մարդահամարի արդյունքների Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3 018 854 մարդ:

ՀՀ մշտական բնակչության թվաքանակներն ըստ 1926-2011թթ. մարդահամարների

(հազար մարդ)

Տարիներ	Ամբողջ բնակչությունը	այդ թվում՝	
		քաղաքային	գյուղական
1926թ.	881.3	167.1	714.2
1939թ.	1282.3	366.4	915.9
1959թ.	1763.0	881.8	881.2
1970թ.	2491.9	1481.5	1010.4
1979թ.	3030.7	1992.5	1038.2
1989թ.	3448.6	2368.5	1080.1
2001թ.	3213.0	2066.1	1146.9
2011թ.	3018.9	1911.3	1107.6

ՀՀ մշտական բնակչության թվաքանակների փոփոխություններն ըստ 1926-2011թթ. մարդահամարների

(հազար մարդ)



Մարդահամարների հաշվառման պահեր՝
1926թ. դեկտեմբերի 17-ի, **1939**թ. հունվարի 17-ի, **1959** թ. հունվարի 15-ի, **1970**թ. հունվարի 15-ի, **1979**թ. հունվարի 17-ի, **1989**թ. հունվարի 12-ի, **2001**թ. հոկտեմբերի 10-ի և **2011**թ. հոկտեմբերի 12-ի դրությամբ:

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2011թ. մարդահամարի նախնական տվյալների համաձայն ՀՀ 2001թ. մարդահամարի համեմատությամբ առկա բնակչության թվաքանակի ցուցանիշը՝ ըստ հաշվառման պահի, նվազել է 130 823 մարդով, իսկ մշտական բնակչությանը՝ 194 157 մարդով:

ՀՀ մշտական բնակչության թվաքանակն ու խտությունն ըստ 2001 և 2011թթ. մարդահամարների

	Տարածքը* կմ²	Բնակչության թվաքանակը		Բնակչության խտությունը մարդ/կմ²	
		2001թ.	2011թ.	2001թ.	2011թ.
Ընդամենը ՀՀ	29743	3 213 011	3 018 854	108	102
Ք. Երևան	223	1 103 488	1 060 138	4948	4754
Արագածոտն	2756	138 301	132 925	50	48
Արարատ	2090	272 016	260 367	130	125
Արմավիր	1242	276 233	265 770	222	214
Գեղարքունիք	5349**	237 650	235 075	44	44
Լոռի	3799	286 408	235 537	75	62
Կոտայք	2086	272 469	254 397	131	122
Շիրակ	2680	283 389	251 941	106	94
Սյունիք	4506	152 684	141 771	34	32
Վայոց ձոր	2308	55 997	52 324	24	23
Տավուշ	2704	134 376	128 609	50	48

* Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի վերջին տվյալների:
**Ներառյալ Սևանա լիճը:

Բնակչության խտությունը (մարդ/կմ²) 2011թ.



ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ

Ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքների ՀՀ մշտական բնակչության 63.3 %-ը բնակվում է քաղաքներում, որի գերակշիռ մասը՝ (55.5 %) մայրաքաղաք Երևանում:

ՀՀ քաղաքային բնակչություն, 2011թ



ՀՀ քաղաքային բնակչության բաշխումն ըստ մարզերի և ք. Երևանի

(մարդ)

ՄԱՐԶԸ ԵՎ Ք. ԵՐԵՎԱՆ	2001թ.	2011թ.
Ք. Երևան	**1 103 488**	**1 060 138**
Շիրակ	174 260	146 908
Լոռի	169 953	137 784
Կոտայք	153 981	137 481
Սյունիք	104 147	95 170
Արմավիր	98 292	85 050
Արարատ	79 885	74 103
Գեղարքունիք	78 957	71 423
Տավուշ	50 721	54 186
Արագածոտն	32 864	30 595
Վայոց ձոր	19 605	18 449
Ընդամենը ՀՀ	**2 066 153**	**1 911 287**

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀՀ ՄԱՐԶԵՐԻ

Ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի նախնական արդյունքների ՀՀ մշտական բնակչության 36.7%-ը բնակվում է գյուղական բնակավայրերում:

ՀՀ գյուղական բնակչության բաշխումն ըստ մարզերի

(մարդ)

ՄԱՐԶԸ	2001թ.	2011թ.
Արարատ	192 131	186 264
Արմավիր	177 941	180 720
Գեղարքունիք	158 693	163 652
Կոտայք	118 488	116 916
Շիրակ	109 129	105 033
Արագածոտն	105 437	102 330
Լոռի	116 455	97 753
Տավուշ	83 655	74 423
Սյունիք	48 537	46 601
Վայոց ձոր	36 392	33 875
Ընդամենը ՀՀ	**1 146 858**	**1 107 567**

Գյուղական բնակչություն, 2011թ



ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

Համաձայն ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքների, ՀՀ մշտական բնակչության միջին տարիքը հաշվառման պահի դրությամբ կազմել է 35.5 տարեկան:

Մշտական բնակչության սեռա-տարիքային կառուցվածքն ըստ քաղաքային և գյուղական բնակչության, %



ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքներով ՀՀ մշտական բնակչության կառուցվածքում կանանց թվաքանակը կազմել է՝ 1 570 802, իսկ տղամարդկանցը՝ 1 448 052:

ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքներով ՀՀ մշտական բնակչության կազմում 1 911 287-ը քաղաքային բնակչությունն է, իսկ 1 107 567-ը՝ գյուղական:

Մշտական բնակչության սեռային բաշխվածությունն
ըստ 2001 և 2011թթ. մարդահամարների



Մշտական բնակչության քաղաքային և գյուղական բաշխվածությունն
ըստ 2001 և 2011թթ. մարդահամարների



ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

Ըստ ՀՀ 2011 թ. մարդահամարի արդյունքների ՀՀ մշտական բնակչության 15 և բարձր տարիքի 2 453 730 մարդուց 1 146 167 տղամարդիկ են, իսկ 1 307 563-ը՝ կանայք: Մարդահամարի հաշվառման պահի դրությամբ ամուսնացած է եղել 15 և բարձր տարիքի բնակչության 60.1%-ը, երբևէ ամուսնացած չի եղել՝ 28.4 %-ը, այրի/կնակորույս՝ 8.9%-ը և ամուսնալուծված/բաժանված՝ 2.6%-ը:

Կանանց թվաքանակը 1000 տղամարդու հաշվով՝
ըստ տարիքային խմբերի



15 և բարձր տարիքի բնակչությունն
ըստ ամուսնական կարգավիճակի



ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ԵՎ ԾՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Ամուսնացած, երբևէ չամուսնացած և ամուսնական այլ կարգավիճակ (այրի/կնակորույս, ամուսնալուծված, բաժանված) ունեցող բնակչության հարաբերակցությունը համապատասխան տարիքային խմբերում



Կանայք ըստ երբևէ ծնած երեխաների թվաքանակների՝ քաղաքային և գյուղական բաշխումով (երբևէ ծնած կանանց թվաքանակից)



ԿՐԹԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ

Ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքների, մարդահամարի հաշվառման պահին 15 և բարձր տարիքի ՀՀ բնակչության 96.8 % ունեցել են բարձրագույն, միջին և նախնական մասնագիտական, միջնակարգ և հիմնական կրթություն:

ՀՀ մշտական բնակչության կրթական մակարդակն ըստ 1979, 1989, 2001 և 2011թթ. մարդահամարների (բարձրագույն, միջնակարգ և հիմնական կրթություն ունեցողները 15 և բարձր տարիքի 1000 բնակչի հաշվով)



Բարձրագույն կրթություն ունեցող կանանց և տղամարդկանց հարաբերակցությունն ըստ 2001 և 2011թթ. մարդահամարների

(%)



Կրթական մակարդակ

15 և բարձր տարիքի ՀՀ մշտական բնակչության 21.7 %-ը հաշվառման պահի դրությամբ ունեցել են բարձրագույն և ավելի բարձր, իսկ 20.4%-ը՝ նախնական և միջին մասնագիտական կրթություն::

Մշտական բնակչության կրթական մակարդակի քաղաքային և գյուղական բաշխվածությունն ըստ ՀՀ 2011թ. մարդահամարի (6 և բարձր տարիքի հազար բնակչի հաշվով)



ՀՀ 6 և բարձր տարիքի մշտական բնակչության կրթական մակարդակն ըստ 2001* և 2011**թթ. մարդահամարների

(հազար մարդ)



* 7 և բարձր տարիքի

** 6 և բարձր տարիքի (նախնական տարիքի փոփոխությունը պայմանավորված է 12 ամյա կրթակարգի անցմամբ):

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

ՀՀ մշտական բնակչությունն ըստ տնտեսական ակտիվության, 2011թ.



ՀՀ տնտեսապես ակտիվ մշտական բնակչության կառուցվածքը, 2011թ.



ՀՀ մշտական բնակչության զբաղվածության մակարդակն ըստ սեռի և տարիքային խմբերի

(%)



16-30 տարեկան երիտասարդներն ըստ տնտեսական ակտիվության և տարիքի

(հազար մարդ)



<u>Գործազուրկներին</u> են վերագրվել 15-75 տարեկան այն անձինք, ովքեր զբաղված չեն եղել մարդահամարին նախորդող շաբաթվա ընթացում, փնտրել են աշխատանք և պատրաստ են եղել անցնել աշխատանքի առաջիկա 2 շաբաթվա ընթացքում:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ* ՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱԶՄԸ

ՀՀ 2011թ. մարդահամարի արդյունքներով հաշվառվել են 763.6 հազ. տնային տնտեսություններ, որոնց 66.9 %-ը տեղաբաշխված են եղել քաղաքներում:

Անհատական և խմբային տնային տնտեսությունների կազմը

(հազար)

	2001թ.			2011թ.		
	Ընդա-մենը	քաղա-քային	գյուղա-կան	Ընդա-մենը	քաղա-քային	գյուղա-կան
Ընդամենը S/S	**779. 4**	**520.7**	**258.7**	**763.6**	**511.1**	**252.5**
բաղկացած՝						
1 անձից	85. 4	59.5	25.8	84.3	62.8	21.5
2 անձից	99. 8	70.8	29.0	101.1	77.6	23.5
3 անձից	102 .6	77.1	25.6	111.9	84.3	27.6
4 անձից	171.6	122.0	49.6	163.1	112.8	50.4
5 և ավելի անձից	319 .9	191.2	128.7	303.2	173.6	129.6

Տնային տնտեսության անդամների միջին թվաքանակն ըստ 2001 և 2011թթ. մարդահամարների

(մարդ)

	2001թ.	2011թ.
Ընդամենը	4.1	4.0
քաղաքային	4.0	3.7
գյուղական	4.4	4.4

Անհատական տնային տնտեսություններն ըստ տնային տնտեսության անդամների թվաքանակի



* Տնային տնտեսություններին են վերագրվել մեկ կամ մի քանի անձանցից բաղկացած միևնույն բնակելի միավորում համատեղ բնակվողները, որոնք իրենց կենսական կարիքներն ապահովել են ընդհանուր տնտեսություն վարելով՝ ամբողջությամբ կամ մասամբ միավորելով իրենց միջոցները:

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Քաղաքային և գյուղական տնային տնտեսությունների բնակելի միավորների բաշխումն ըստ դրանց բարեկարգվածության հիմնական տեսակների

	Ընդամենը	%-ով ընդամենը տ/տ-ից	Քաղաքային	ընդհա-նուրից %-ով	Գյուղական	ընդհա-նուրից %-ով
Ընդամենը տնային տնտեսություններ (տ/տ)	**763584**		**511065**		**252519**	
որոնց բնակելի միավորներն ապահովված են						
կենտրոնացված ջրամատակարարմամբ	673310	88.2	481769	94.3	191541	75.9
կոյուղու կենտրոնացված համակարգով	565252	74.0	463872	90.8	101380	40.1
լոգարանով կամ ցնցուղով	615662	80.6	465224	91.0	150438	59.6
ողողվող զուգարանով	560451	73.4	469221	91.8	91230	36.1

ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՆՏԵՐՆԵՏ ԿԱՊԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ

Մարդահամարի հաշվառման պահի դրությամբ, 246.1 հազար տնային տնտեսություններ ունեցել են համակարգիչ: Այդ տնային տնտեսությունների 74.7 % -ի համակարգիչներն ունեցել են մշտական ինտերնետ կապ, 13.0 %-ը՝ ոչ մշտական, իսկ 12.3 %-ը չեն ունեցել ինտերնետ կապ:

	Ընդամենը տ/տ, որոնք ունեն համակարգիչ		Որոնցից՝			
			մշտական ինտերնետ կապի առկայությամբ		ոչ մշտական ինտերնետ կապի առկայությամբ	
	քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական	քաղաքային	գյուղական
Ընդամենը ՀՀ	**207769**	**38357**	**161845**	**22066**	**24187**	**7877**
ք. Երևան	143952	-	114011	-	16276	-
Արագածոտն	2440	2960	1894	1489	234	637
Արարատ	5179	8385	3816	5354	719	1682
Արմավիր	8245	6515	6618	4022	921	1266
Գեղարքունիք	4518	3957	3420	2042	490	1082
Լոռի	10157	2640	7463	1578	1303	438
Կոտայք	11581	6422	8477	3364	1529	1452
Շիրակ	10834	3519	7495	1855	1729	688
Սյունիք	6329	1021	5178	653	497	133
Վայոց ձոր	1488	977	1140	597	177	172
Տավուշ	3046	1961	2333	1112	312	327

ՀՀ 2011թ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

ՀՀ 2011թ. մարդահամարի վերջնական արդյունքների հրապարակումը նախատեսված է 2013 թվականին:

Տվյալների տարածումը նախատեսվում է իրականացնել հետևյալ ձևաչափերով՝

- Մամուլի հաղորդագրություններ
- ՀՀ սոցիալ–տնտեսական վիճակը տեղեկատվական ամսական զեկույց
- Մասնագետ հետազոտողների համար նաև տվյալների անվանազերծված ընտրանքային բազա
- Մարդահամարի արդյունքների (ըստ Հայաստանի Հանրապետության, Երևան քաղաքի և յուրաքանչյուր մարզի) էլեկտրոնային տարբերակով հրապարակումը: Ֆինանսական միջոցների առկայության դեպքում մարդահամարի արդյունքների 12 հատորյա ժողովածուի հրապարակում նաև թղթային կրիչով: